



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԴԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

« 19 » սեպտեմբեր 2017 թ.

N 259-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ԱԿՈՒՆՔԻ
ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ
ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ԱՆՆԱ
ՍԱՄՎԵԼԻ ՆԱՆԱՆՅԱՆԻՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2011 թվականի սեպտեմբերի 15-ի N 197-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 71-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության «Ակունքի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի 2017 թվականի սեպտեմբերի 14-ի N 4 որոշումը և նույն հանձնաժողովի եզրակացությունն ու Աննա Սամվելի Նանանյանի դիմումը՝

կարգադրում եմ՝

1. 2017 թվականի սեպտեմբերի 19-ից Աննա Սամվելի Նանանյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Ակունքի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնը զբաղեցնելով աշխատանքային պայմանագիր՝ 3 տարի ժամկետով:
2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:



ԿԱՐԵՆ ԲՈԹՈՅԱՆ